

ՀԱՅՈՒ

Աստուած Հայը հրեշտակ է ստեղծած. վերջը զոջացած է ու սատանայի է վերածած: Յետոյ ջնջած է անոր սատանայութիւնն ալ: Հայը, սակայն, երկու եակներէն մէյ մէկ բան պահած է իր մէջ: Աստուած Հայը երկիր դրկած է՝ իբրեւ *ֆէնմէն*: Հայը մարդ չկրցաւ ըլլալ աշխարհի մէջ:

Դիւրաւ կարելի է ճանչնալ զինքը: Ունի գլուխ մը, որուն գանգուր մագերը մրրիկի մը մէջ են՝ նման իր լեռնաշխարհին ալեկոծութեան: Իր աչքերը՝ սեւով ու լոյսով խառն, լիճեր են, որոնց մէջ նետուած են իր ցեղային հանճարին քնարները, նկարները, ճարտարապետական ոճերը, ազգային պատմութիւնը: Այդ բոլորը վեր կ'ելլեն, երբ հով մը փչէ: Իր լիճերէն կ'ելլեն բարութեան անոյշ գետեր: Իր քիթը Արարատ մըն է: Խօսակցութիւնն ալ երկրաշարժ: Կռնակէն աւելի շուտ կարելի է ճանչնալ զինքը: Երբ տեսնես մէկը, իր ետեւէն, որ ծոծրակին մագերը կտրել տալու համար շատոնց է սափրիչին չէ գացած, վստահ կրնաս ըլլալ, որ անկէ Հայ է:

Դժուար է, սակայն, զինքը ճանչնալ իր ներսէն:

Առաջին քննութեամբ կ'ըսես՝ թիւ է ան: Կը կարդաս իր թուանշանները ու կը տեսնես, որ տակէն կ'ելլեն բառեր: Կ'ըսես՝ խօսք է ան: Կ'ընթեռնուս խօսքերը ու կը գտնես, որ ոտանաւոր է: Կը նկատես, սակայն, որ բնաւ չափ չունի ու կ'եզրակացնես՝ հանելուկ է ան: Կը ճգնիս գտնել ի՞նչ ըլլալը, մէյ մըն ալ կը տեսնես, որ առեղծուած է եղեր: Կ'աշխատիս լուծել, սակայն, առեղծուածը քենէ աւելի կ'աշխատի չլուծուելու համար: Հայը աշխատանք կը կարծես ու կ'ըսես իրեն. «Ի՞նչքան գործունեայ ես, եկուր միասին քրտիկք թափենք հանրային գործի մը համար»: Կուգայ, բայց ատեն մը վերջը կը խորհրդածես. «Ան գործի մարդ է անձնական ձեռնարկի մէջ ու խօսքի մարդ՝ հանրային ձեռնարկի մէջ»: Օր մըն ալ կ'իմանաս, որ դրամ է դիզեր: Ան՝ խաբուած Աստուծմէ ու իր արարածներէն, փարեր է մամոնային ու նոյնացեր է անոր հետ: Շիներ է տուն, բացեր է խանութ, ի՞նչ փոյթ, թէ ոտքերը յաճախ իր տան պատուհանէն դուրս են ելած ու իր գլուխը իր խանութին դռնէն դուրս է: Կը չափէ, կը կշռէ,